# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ֆաբրիք Լայթ ՍՊԸ-ն ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/56 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Ֆաբրիք Լայթ ՍՊԸ | Համաձայն տեխնիկական բնութագրի | Բանվորական արտահագուստ | Ֆաբրիք Լայթ ՍՊԸ | Աշխատանքային արտահագուստը պետք է կարվի բամբակապոլիէսթերային ջրակայուն կտորից: Կտորի խտությունը ոչ պակաս – 220 գ/մ2: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը 6000C ջերմաստիճանով թաց մշակումից հետո ըստ հիմքի կազմի ոչ ավել -3,5%, ըստ միջնաթելի ±2,5%: Արտահագուստը բաղկացած է կարճ բաճկոնից և կիսակոմբինեզոնից: Կտորի հիմնական գույնը – բաց մոխրագույն կամ մուգ կապույտ (մնացած գույները համաձայնեցնել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պատվիրատուի հետ)։ Ուսագոտուց մինչև դաստակը 10 սմ լայնքով դեղին երիզ պետք է կարված լինի։ Կարճ բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ տեսականու չափսի մասին նշումով, թևքերը՝ երկարաթև, դաստակի հատվածում մանժետ 5,5 սմ, որը կոճկվում է կոճակներով։ Կարճ բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանվող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով։ Կարճ բաճկոնի կողային հատվածում տեղադրված է 2 ներկարված գրպան, որոնք թեքված են դեպի ներս, կենտրոնական փակվող շղթայի նկատմամբ 550 թեքությամբ իսկ կրծքային հատվածում 2 վրադիր ծավալային գրպաններ։ Կարճ բաճկոնի կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2,5-3 սմ լայնությամբ մանժետով։ Գրպանները մշակված են բամբակյա աստառից, որի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2։ Կրծքային գրպանները փակվում են կպչունային փականներով։ Կրծքային գրպանների արտաքին մասում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներսի կողմից ուղղահայաց դեղին երիզ պետք է լինի: Կրծքային գրպանից վերև ընկած հատվածում պետք է կարված լինի հորիզոնական 5 սմ-ոց լայնքով, կորալագույն A որակի լուսանդրադարձնող ժապավեն, որին համապատասխան թիկունքի ամբողջ երկայնքով և թևքերում նույն ժապավենից պետք է լինի: Կարճ բաճկոնը գոտկատեղի հատվածում պետք է ունենա մասնակի ձգում էլաստիկ ռեզինով: Հիմնական ամրացումը պետք է լինի շղթայով և կպչում ժապավենով (լիպուչկայով): Կարճ բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության բազմագույն լոգոն: Կիսակոմբինեզոնը ուղիղ ձևվածքի, առջևից 2 ներկարված կողային գրպաններ, որոնք մշակված են բամբակյա աստառից: Կիսակոմբինեզոնի ներքևի ծնկային հատվածում տեղադրված է 1 վրադիր ծավալային, ձևավոր գրպան, կափույրով: Վրադիր գրպանի բարձրությունը ոչ պակաս 21 սմ, լայնությունը` ոչ պակաս 18 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սմ: Մեջքի գոտկատեղի հատվածում կա էլաստիկ ռեզին: Կապիչները (բրետելները) պլաստիկ ֆաստեքս ամրակներով են, կարգավորվում են երկարությամբ՝ էլաստիկ ռեզինի շնորհիվ: Հագուստի վրա օգտագործվում է 50 մմ լայնությամբ լուսարձակում անդրադարձնող ժապավեն: Գործվածքը՝ խառը (սմեսային), ջրակայուն մշակմամբ: Հատուկ հագուստը պետք է լինի հարմարավետ: Կազմը՝ բամբակ 20%, պոլիէստեր 80%, խտություն՝ 220 գ/մ² կամ բամբակ 30%, պոլիէստեր 70%, խտություն՝ 220 գ/մ² Ներսի նյութ՝ առանց բրդացման և ջերմամեկուսիչ շերտի Ջերմաստիճանային ռեժիմ՝ +5-ից +25°C " Արտահագուստի բոլոր զարդակարերը պետք է լինենե զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ մշակված հատուկ ամրակարի մեքենայով: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1կոմպլեկտ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տուպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը: Ստորև աղյուսակում ներկայացված է «Էլեկտրամատակարարման» ծառայությանը անհրաժեշտ բանվորական արտահագուստի քանակը ըստ չափսերի: Չափս ; Քանակ: 44 1 46 7 48 9 50 19 52 21 54 16 56 13 58 1 62 2 64 3 68 1 |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ФабрикЛайт в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/56 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |